ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ **11-Լ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի 2026 թվականի տարեկան ծրագիրը՝ (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի պետին՝ ապահովել Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը:
3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

02.02.2026

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի 2026 թվականի
փետրվարի 2-ի N 11-Լ հրամանի

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ				
No.	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿԻ		ԱՐԴՅՈՒՆՔ
		1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	
1	**2025 թվականի արդյունքների ամփոփում**	2025 թվականի վիճակագրության վերլուծության իրականացում		2025 թվականի վիճակագրության վերլուծությունը ներկայացվել է ՆԳ նախարարին և հրապարակվել ՆԳ պաշտոնական կայքում
2	**Հաշվառումների իրականացումը կարգավորող իրավական ակտերի վերանայում, արդիականացում**	Հաշվառումների իրականացումը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրություն, դրանցում առկա թերությունների ու խնդիրների հստակեցում, առկա կարիքներին ու մոտեցումներին համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում ու շրջանառություն	Հաշվառումների իրականացումը կարգավորող իրավական ակտերի նախագծերի ամփոփում ու հաստատում	Հաշվառումների իրականացումը կարգավորող բոլոր իրավական ակտերում կատարվել են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ
3	**ՀՀ հանցավորության վիճակագրական և վերլուծական պրոֆիլի կազմում**	Հետազոտության կառուցվածքի, ձևաչափի ու բովանդակության հստակեցում, հետազոտական հարցերի, անհրաժեշտ տեղեկատվության շրջանակի սահմանում, առկա սահմանափակումների վեր հանում, հետազոտական մեթոդների ու վերլուծական գործիքների որոշարկում, միջազգային փորձի ուսումնասիրություն	Ընտրված հետազոտական մեթոդների ու վերլուծական գործիքների կիրառմամբ, սահմանված ձևաչափի պահպանմամբ ՀՀ հանցավորության վիճակագրական և վերլուծական պրոֆիլի կազմում	ՀՀ հանցավորության վիճակագրական և վերլուծական պրոֆիլը մշակվել է ու ներկայացվել ՆԳ նախարարին ու ոլորտի իրավասու այլ մարմիններին, անցկացվել է առնվազն երկու հանրային քննարկում

4	**Սպանությունների համակողմանի ուսումնասիրություն**	ՀՀ-ում սպանությունների քանակի, շարժընթացի, պատճառների ու նպաստող պայմանների համակողմանի քրեագիտական ուսումնասիրության իրականացում, այդ թվում՝ դրանց հաշվառման առանձնահատկությունների վերաբերյալ վերլուծության իրականացում	Ուսումնասիրության արդյունքների ներկայացում ՆԳ նախարարին ու ոլորտի իրավասու այլ մարմիններին	Հետազոտական աշխատանքը հրապարակված է
5	**Այլ մարմիններից ստացման ենթակա տվյալների փոխանցման համար սահմանված կարգավորումների ու ընթացակարգերի պահպանման երաշխիքների սահմանում**	Այլ մարմիններից ստացման ենթակա տվյալների ամբողջականության, սահմանված ժամկետներում փոխանցման հետ կապված խնդիրների հստակեցում, այդ մարմինների հետ քննարկումների անցկացում ու դրանց հաշվառմամբ լուծումների մշակում	Այլ մարմիններից ստացման ենթակա տվյալների փոխանցման կարգի, ձևաչափի, ամբողջականության, ժամկետների պահպանման համար երաշխիքներ սահմանող նախագծերի փաթեթի մշակում ու շրջանառություն	Այլ մարմիններից ստացման ենթակա տվյալների փոխանցման կարգի, ձևաչափի, ամբողջականության, ժամկետների պահպանման համար երաշխիքներ սահմանող նախագծերի փաթեթը ընդունվել է
6	**Թեմատիկ ու պարբերական վերլուծությունների ու հետազոտությունների իրականացում**			Հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) իրականացրել է ու հրապարակել առնվազն 6 թեմատիկ ու պարբերական վերլուծություններ ու հետազոտական աշխատանքներ, այդ թվում՝ ՆԳՆ-ում ձևավորվող երիտասարդ հետազոտողների ցանցի անդամների ներգրավմամբ
7	**Կենտրոնի թվային նոր համակարգի գործարկում**	Կենտրոնի թվային նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում, նոր համակարգի գնման գործընթացի մեկնարկ	Կենտրոնի թվային նոր համակարգի գնման գործընթացի ամփոփում, համակարգի ստեղծման աշխատանքների իրականացում	Կենտրոնի թվային նոր համակարգը պատրաստ է կիրառման
8	**Հանցավորության տվյալների բաց հարթակի գործարկում**	Հանցավորության վիճակագրական տվյալների հանրային հասանելիության ապահովման նպատակով բաց, վիզուալ հարթակի գործարկմանն ուղղված աշխատանքների իրականացում, հարթակի	Հանցավորության տվյալների բաց հարթակի գործարկում և հանրային հասանելիության ապահովում, տվյալների պահպանման և	Հանցավորության տվյալների բաց հարթակը գործարկված է ու ապահովում է առնվազն 2025 թվականի հանցավորության տվյալների հանրային հասանելիությունը

		տեխնիկական մշակում և փորձարկում, հարթակում հրապարակման ենթակա տվյալների շրջանակի և ձևաչափի սահմանում	պարբերական թարմացման մեխանիզմների մշակում	
9	**Կենտրոնի կողմից մատուցվող հանրային ծառայությունների պրոֆիլի հստակեցում**	Կենտրոնի հանրային ծառայությունների պրոֆիլի վերաբերյալ հայեցակարգային լուծումների մշակում		Հստակեցվել են Կենտրոնի կողմից մատուցվող հանրային ծառայությունների տեսակները, ծավալները, շրջանակը ու եղանակները
10	**Դատվածության տեղեկանքի ստացման գործընթացի թվայնացում**	Դատվածության տեղեկանքի ստացման գործընթացի թվայնացման տեխնիկական առաջադրանքի մշակում ու իրավական կարգավորումների վերանայում	Դատվածության տեղեկանքի ստացման գործընթացի թվայնացման համար անհրաժեշտ պայմանների ու թվայնացման գործընթացի ապահովում	Դատվածության տեղեկանքի ստացման գործընթացը թվայնացված է
11	**Կենտրոնի արխիվային գործի գործող համակարգի ուսումնասիրություն և կատարելագործում**	Կենտրոնի արխիվի ձևավորման, տվյալների պահման ու ոչնչացման ներկա պայմանների ու կարգավորումների ուսումնասիրություն, արխիվային գործի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակում	Համապատասխան իրավական փոփոխությունների իրականացում ու, ըստ անհրաժեշտության, արխիվի առանձին հատվածների տեղափոխում	Կենտրոնի արխիվային գործի համակագի կատարելագործմանն ուղղված իրավական և պրակտիկ գործընթացները մեկնարկել են
12	**Կենտրոնի արխիվի ու այլ փաստաթղթերի թվայնացում**		Առաջնահերթության կարգով թվայնացման ենթակա փաստաթղթերի շրջանակի սահմանում	Կենտրոնի արխիվի ու այլ փաստաթղթերի թվայնացման աշխատանքները մեկնարկել են, ձևավորվում է Կենտրոնի թվային արխիվը
13	**Կենտրոնի կարիքների գնահատում**	Կենտրոնի կարիքների գնահատում, կարիքների ցանկի հստակեցում ու ներկայացում ՆԳ նախարարին	Կարիքների ներառում միջազգային գործընկներներին ներկայացվող դոնորների համակարգման մատրիքսում	Իրականացվել է Կենտրոնի կարիքների համապարփակ գնահատում և կազմվել կարիքների հստակ ցանկը
14	**Կենտրոնի իրավակազմակերպական ձևի գնահատում**	Կենտրոնի իրավակազմակերպական ձևի գնահատման իրականացում, Կենտրոնի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար համապատասխան իրավակազմակերպական ձևի հստակեցում, իրավական ակտերի նախագծերի փաթեթի մշակում	Նախագծերի փաթեթի շրջանառություն ու ամփոփում	Կենտրոնի իրավակազմակերպական ձևի գնահատումն իրականացվել է, փոփոխությունն ապահովող փաթեթը ուղարկվել է ՀՀ կառավարություն

15	**Խորհրդատվական խորհրդի ձևավորում**	Խորհրդատվական խորհրդի դերի, նպատակների ու գործառույթների շրջանակի հստակեցում, դրա հիման վրա համապատասխան հրամանների նախագծերի մշակում	Խորհրդատվական խորհրդի վերաբերյալ կարգավորումների քննարկում դրա կազմում ներառվող այլ մարմինների հետ ու կոնսենսուսային լուծումների հաստատում	Հաստատվել են Խորհրդատվական խորհրդի ձևավորման ու գործունեության կարգը, կազմը
16	**Խորհրդատվական խորհրդի գործունեության մեկնարկ**		Խորհրդատվական խորհրդի վերաբերյալ քննարկումների անցկացում դրա կազմում ներառվող մարմինների ներկայացուցիչների հետ	Խորհրդատվական խորհրդի ձևավորումից հետո անցկացվել է Խորհրդատվական խորհրդի առնվազն մեկ նիստ
17	**Անձնական տվյալների պաշտպանության ապահովման մեխանիզմների բարելավում**		Կենտրոնի գործունեության շրջանակներում անձնական տվյալների պաշտպանության ապահովմանն առնչվող խնդիրների ուսումնասիրության իրականացում, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստման անցկացում	Վեր են հանվել Կենտրոնի գործունեության շրջանակներում անձնական տվյալների պաշտպանության ապահովման ոլորտում արձանագրված հիմնական խնդիրները, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստում է անցել Կենտրոնի ողջ անձնակազմը
18	**ՀՀ-ում հանցավորության վիճակի վերաբերյալ աշխատաժողովի անցկացում**		ՀՀ-ում հանցավորության վիճակի վերաբերյալ առաջին թեմատիկ աշխատաժողովի անցկացում, որի շրջանակներում քննարկման ենթակա թեմաների մեջ կընդգրկվեն նորաստեղծ Կենտրոնի նպատակների ու խնդիրների, առաջին տարվա ընթացքում կատարված աշխատանքների ներկայացումը, հանցավորության վիճակագրության վարման ու վերլուծության ոլորտում առկա խնդիրները ու հնարավորությունները	Անցկացվել է ՀՀ-ում հանցավորության վիճակի վերաբերյալ աշխատաժողով, որին մասնակցել են ՆԳՆ և այլ պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ
19	**Կենտրոնի 2027**		Կենտրոնի 2027	Կենտրոնի 2027 թվականի

	Թվականի տարեկան ծրագրի կազմում		Թվականի տարեկան ծրագրում ներառելու համար առաջարկների ստացում ու ամփոփում ՆԳՆ-ից, ենթակա մարմիններից, այլ պետական մարմիններից ու շահագրգիռ կողմերից	տարեկան ծրագիրը ներկայացվել է ՆԳ նախարարի հաստատմանը